

թիւն հասին ի վերայ ամենայնի, եւս առաւել մեծ վասնկ Հայոց ազգի: Զի Խղբլպաշն անդ սուրկուն արարեալ տարաւ ի ներս՝ սկսեալ էրեւանայ ամայի եւ աւեր դարձոյց, քանդելով, աւերելով եւ հրայրեաց հրղեհեալ հրով. զկէսն որ ի տունս Հոռոմոց՝ Թուրքի հեծելն աւիրեալ ոչինչ դարձոյց: Վա՛յ ի վերայ վայի եւ եղուկ թշուառացեալ Հայոց ազգի⁴, զի ցրեցան, կորեան եւ բնաջինջ դարձան. ո՛հ, ո՛հ եւ աւա՛ղ թշուառութեանս, միթէ Գրոց բանքն կատարեցաւ կամ սուրբ Լուսաւորչի խնդիրքն հասան, որ Նեոան ժամանակն վերջին Հայք չի մնան, կամ սուրբ Ներսիսի անէծքն հասան, զի եղկելի Հայք բնաջինջ դարձան. վա՛յ ինձ: Զի եւ ի Լէհ Հայոց գլուխ չարիք եկին, որ ի մեծ փաթերակ անկան՝ հոգով, մարմնով, տամբ եւ զարմօք կորեան:

Զոր ի թղ. ՌՀԹ. ել ոմն մեծազգի եւ փարթամաց զարմի, Նիկոլ անուն Թորոսեայ նախնական անուամբ կոչեցեալ⁵, մանուկ տիօք եւ տգէտ մտօք, խաւարեալ խորհրդով եւ անխմաստ հանձարով, անուղղայ⁶ վարիւք, վատ եւ ապիրատ ամենայն իրս եւ ի գործս, լիրբ, յանզգամ եւ անդուզն, ի կարգս աստիճանի դպիր գոլով: Եւ ելեալ ԻԳ ամաց՝ կաշառօք ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի ՄԵԼքիսէթ կաթողիկոսէ, յորժամ երբ զնա մեր

⁴ ազի:

⁵ կոչեալ:

⁶ անուղա: